

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Երկրաբանություն և աշխարհագրություն 3, 2014

Геология и география

Երկրաբանություն

УДК 553.041–553.078

**ԴԻԼԻԶԱՆ ՔԱՂԱՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՍՊԻՏԱԿԱԶՈՒՄ ԳԵՏԱԿԻ ՀՈՎՏԱՍՍԱՍԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ժ.Ա ԱԶՈՅԱՆ*

ԵՊՀ ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոն, Հայաստան

Դիլիզանի արևելյան մասի բնակչության ջրամատակարարումը կատարվում է Սպիտակաջուր (Ֆրոլովի Բալկա) գետակի ջրերի հաշվին, սակայն հեղեղումների շրջանում նրանք պրտորվում են և դատմում խնդրու համար ոչ պիտանի:

Աշխատանքում հիմնավորվում է, որ Սպիտակաջուր գետակի հոսանքի հովտամասային որոշ տեղամասերի ջրաերկրաբանական պայմանները բարենպաստ են առափնյա և ենթահոմային հորիզոնական դրենաժների կառուցման համար, որը հնարավորություն կտա օգտագործել ստորերկրյա ջրերը խնդելու նպատակով: Ընդ որում, դրենաժային ջրերի քանակը՝ գնահատված ջրաերկրաբանական հաշվարկներով, կազմում է 20 լ/վրկ, ինչը լիարժեքորեն կրավարարի քաղաքի նշված հատվածի բնակչության (շուրջ 5000 մարդ) ջրամատակարարման համար:

Keywords: infrabed drainages, waterside drainages, water supply, filter, underground water.

Ներածություն: Դիլիզան քաղաքի որոշ թաղամասերի խմելու ջրի մատակարարումը կատարվում է Սպիտակաջուր (Ֆրոլովի Բալկա) գետակի միջին հոսանքի ջրերի հաշվին՝ նախկինում կառուցված զիսամասային հանգույցի, կարգավորիչ և պարզաբան ջրավագանների ինքնահոս համակարգի միջոցով: Սակայն գետակի վարարումների շրջանում ջուրը խիստ պղտորվում է և նշված համակարգի միջոցով հնարավոր չէ նաքու ջրի մատակարարումը:

Բնական պայմանների հաշվառմանը, որպես այլբնտրանքային տարրերակ, քաղաքի նշված թաղամասերի ջրամատակարարումը կարելի է իրականացնել Սպիտակաջուր գետակի առափնյա հովտամասերի (ողողադաշտերի), ստորերկոյա ջրերի և գետահոմնի նպաստավոր տեղամասերում, ինֆիլտրացիոն ջրհավաք ավագանների կառուցումով, գետակի ջրերի ֆիլտրացիոն հոսքերի հաշվին: Դրա համար անհրաժեշտ է ընտրել ջրհավաք (ջրհան) կառույցների համապատասխան տիպեր և հաշվարկել նրանցում ձևավորվող ջրաքանակը: Նման մոտեցման դեպքում տեղի է ունենում գետաջրերի մեխանիկական մաքում, սամիտարական որակի լավացում, վերանում է մաքրման կայանների վերակառուցման կամ նորերի կառուցման անհրաժեշտությունը և հնարավոր է դառնում տարվա բոլոր եղանակներին մաքուր ջրի մատակարարումը:

* E-mail: zhora.achoyan@ysu.am

Խնդրի դրվածքը: Սպիտակաջուր գետակը հանդիսանում է Աղստև գետի աջափյա վտակը: Այն լեռնային բնույթի է, ունի 4,0–4,5 կմ երկարություն, հոսքի մեծ արագություն, փոքր ծախս ու հոսքի մակերես և բացառությամբ միջին հոսանքի որոշ հատվածների, զուրկ է լայն հովտամասերից և գետահունային տեղամասերից: Այս ամենի հաշվառմամբ, ինժեներական ջրհան կառույցների տեղերի ընտրման և դրանցից սպասվելիք ջրաքանակի հաշվարկման առումով, ուսումնասիրությունները (տեղազննական, տեղագրական, հորատման, ֆիլտրացիոն) իրականացվել են Սպիտակաջուր վտակի նշանակած հատվածի սահմաններում (գետաբերանից մոտ 1,2 կմ հոսանքով դեպի վեր): Այն ընկած է 1424–1455 մ բացարձակ նիշերի սահմաններում և ջրամատակարարվող օբյեկտներից բարձր է 150–200 մ:

Հետազոտության մեթոդիկա: Ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառույցածքում մասնակցում են վերին էոցենի հասակի հրաբխային հոսքերը՝ ներկայացված պորֆիրիտներով (15–20 մ և ավել հաստությամբ), որոնց տեղ-տեղ ծածկում են ժամանակակից դելյուվիալ-էլլուվիալ կամ պրոլյուվիալ-ալյուվիալ առաջացումները, որոնց տարածումն անհամաշափ է՝ 0,0–2,5 մ:

Տեղամասի ստորերկրյա ջրերը ձևավորվում են ի հաշիվ մթնոլորտային տեղումների, ճնհալքի և մասամբ կոնդեսացման ճանապարհով առաջացած ջրերի ինֆիլտրացիայի: Նրանք ունեն ոչ մեծ տարածում, հանդես են գալիս քոյլ հոսքերի տեսքով և գետահովտի ցածրադիր հատվածներում դուրս եկող՝ սեղույային բնույթի ոչ մեծ ծախս ունեցող աղբյուրների, երբեմն քացույթների տեսքով և լցվում գետակը: Գետակի և առավել ևս գետահովտային ստորերկրյա ջրերը քիմիական կազմով և բաղադրությամբ լիարժերուեն ախտանի են խմելու համար: Պատկանում են հիդրոկարբոնատ-կալցիումային տիպին, հաճրայնացումը կազմում է 80–120 մգ/լ (գերբաղցր), կոշտությունը՝ 1,5–1,8 մգ համ./լ (շատ փափուկ), ջրածնային ցուցանիշը (pH)՝ 6,8–7,2 (չեզոքից քոյլ ալկալի) համաձայն լաբորատոր տվյալների:


Գետակի հովտամասային տեղամասերում գրունտային ջրերը (հոսքերը) տեղադրված են 1,8–2,0 մ խորությունների վրա: Ջրատար ապարները ներկայացված են ճալարարակուպճային առաջացումներով՝ կավավագային և ավազային լցոնով մինչև 10–15% և ունեն 1,5–2,5 մ հաստություն: Վերևից ծածկված են աննշան հաստության (0,05–0,2 մ) հողաբուսական շերտով, իսկ ներքեւում նատած են մոխրագույն պորֆիրիտների վրա, որոնք վերևի մասում ունեն քոյլ ճեղքավորվածություն և տարածված են ամբողջ գետակի լանջերում և հունատակերում: Դեպի լանջերը պորֆիրիտների վրա նստած ապարների լիքոլոգիական կազմը դառնում է կավավագային և ավազակավային:

Հարկ է նշել, որ Սպիտակաջուր գետակի միջին հոսանքի որոշ հատվածներում այս կամ այն շափով զարգացած են ոչ մեծ լայնության (3–8 մ) հովտամասերը, գետահունի լայնացում (մինչև 15–20 մ) նկատվում է միայն մեկ տեղում՝ մոտ 30 մ երկարությամբ (նկ. 1): Նշանակած տեղամասերի գեոմորֆոլոգիական, երկրաբանակիրովոգիական և ջրաերկրաբանական պայմանները բարենպաստ են ինժեներական կառույցների միջոցով հովտամասերի ստորերկրյա և բնական ֆիլտրացումից առաջացած, ինչ որ շափով նաև գետակի ջրերը ներգրավել և օգտագործել ջրամատակարարման նպատակով:


Տվյալ պայմաններում նման ինժեներական կառույցները կարող են հանդիսանալ առափնյա (ափային) և ենթահունային հորիզոննական փակ խողովակային դրենաժների համակարգերը:

Առափնյա հորիզոննական դրենաժը նախատեսվում է անցկացնել գետակի երկայնքով նրանից ոչ հեռու, կրկնելով նրա հունը, որոշ տեղերում անցնելով մի

ափի հովտամափի մյուսը (նկ. 1) և գետֆիլտրացիոն սխեմայից ելնելով լինելու է կատարյալ տիպի:



Նկ. 1: Սպիտակաջուր գետակի միջին հոսանքի 500 մ հատվածի հատակագծի սխեմա.
1 – Սպիտակաջուր գետակ; 2 – հորիզանտական փակ դրենաժի ուղեգիծը; 3 – ենթահունային դրենաժի տեղամաս:



Նկ. 2: Առավելագույն հորիզանտական կատարյալ դրենաժի հաշվարկային սխեմա:

Կատարյալ տիպի դրենաժի ծախսը (նկ. 2) կարելի է որոշել ըստ Դյուպոլի բանաձևի [1], որը որոշ ձևափոխումներով հետո ստանում է հետևյալ տեսքը.

$$Q_0 = \frac{1}{2} \left(\frac{K_1 H^2}{l_1} + \frac{K_2 h_e^2}{l_2} \right), \quad (1)$$

որտեղ Q_0 -ն՝ դրենաժի ծախսն է նրա 1 գծ.մ-ից, ընդհանուր ծախսը $Q = Q_0 \cdot L$ (L -ը՝ դրենաժի երկարությունը); K_1 և K_2 -ը՝ գետահովտային և լանջային ապարների ֆիլտրացիայի գործակիցներն են; H -ը՝ գետում ճնշման բարձրությունն է ջրամերժի վրա; h_e -ը՝ ջրատար հորիզոնի հաստությունն է լանջամասում; l_1 -ը՝ դրենաժի հեռավորությունն է գետափից; l_2 -ը՝ դրենաժի ազդման շառավիղն է դեպի լանջամաս:

Դրենաժի ազդման շառավիղը դեպի լանջամաս կարելի է որոշել.


$$l_2 = h_e (K_2 / W)^{1/2}, \quad (2)$$

որտեղ W -ն՝ ինֆիլտրացիայի ինտենսիվությունն է (մ/օր), որոշվում է փորձնական ճանապարհով:

Ենթահունային դրենաժի ծախսը, եթե այն նստած է ջրամերժի վրա (նկ. 3), որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_0 = K H_0 / 0,73 \lg \operatorname{ctg} \left(\frac{\pi}{8} \cdot \frac{d}{T} \right), \quad (3)$$

որտեղ Q_0 -ն՝ դրենաժի ծախսն է նրա 1 գծ.մ-ից; K -ն՝ Ենթահունային տեղամասի ապարների ֆիլտրացիայի գործակիցն է; H_0 -ն՝ ճնշման բարձրությունն է դրենաժի վրա, հաշված նրանում ջրի մակարդակից; d -ն՝ դրենաժի տրամագիծն է; T -ը՝ արհեստականորեն ստեղծված շերտի հաստությունն է:



Նկ. 3: Դեպի Ենթահունային դրենաժ ջրի հոսքի հաշվարկային սխեմա.


1 – ջրհավաք դրենաժ; 2 – ջրավազան; 3 – ջրամերժ; 4 – Ենթահունային ջրատար հորիզոն:

Սպիտակացուր գետակի միջին հոսանքի հատվածում առավիճակ դրենաժի կառուցումը հճարավոր է միայն 360 մ երկարության վրա (նկ. 1): Այն անցնելու է գետակի աջ ափով նրանից մոտ 3,0 մ հեռավորությամբ, նրա խորությունը երկի մակերևույթից հաշված կազմի 1,5–2,2 մ, իսկ գետակի ջրի մակարդակից՝ 0,7–1,5 մ, միջինը 1,1 մ:

Առավիճակ դրենաժում գոյացող ընդհանուր ջրաքանակի հաշվարկի համար՝ $H = 1,1$ մ; $l_1 = 3,0$ մ; $h_e = 2,5$ մ; $K_1 = 15$ մ/օր; $K_2 = 1,0$ մ/օր; $L = 360$ մ; $W = 0,001$ մ/օր, եւակետային տվյալներից՝ ըստ (2)-ի՝ $l_2 \approx 80$ մ (K_2 և W պարամետրերը վերցվել են գրականությունից [2], մնացածները չափվել և որոշվել են տեղում):

Ըստ (1) բանաձևի դրենաժի միավոր երկարություն մուտք գործող ջրի ծախսը կլինի՝ $Q_0 = 3,06 \text{ } \text{մ}^3/\text{օր} = 0,035 \text{ } \text{l}/\text{վրկ},$ իսկ գումարային ծախսը՝ $Q = 0,035 \cdot 360 = 12,7 \text{ } \text{l}/\text{վրկ}:$

Ենթահունային դրենաժը կարելի է կառուցել գետակի միջին հոսանքի ներքեւի մասում, որտեղ գետահունի լայնությունը կազմում է 18 մ, իսկ երկարությունը՝ 30 մ (նկ. 4):



Նկ. 4: Ենթահունային դրենաժի տեղամասի սխեմա.

1 – դրենաժների մաքրման դիտահոր; 2 – ջրընդունիչ դիտահոր:

Դրա համար անհրաժեշտ է այդ հատվածում ժամանակավոր փոխել գետահունը և իմ գետահունի նշված հատվածի տեղամասում անցկացնել երկու խողովակային դրենաժ՝ յուրաքանչյուրը 25 մ երկարությամբ և իրարից 5 մ հեռավորությամբ: Այնուհետ դրանց վերևի և ներքևի մասերը դրենաժային խողովակով միացնել իրար և դուրս բերել, ինֆիլտրացիոն ավազանի ստեղծման համար կառուցվելիք պատվարի միջով (նկ. 4): Գետակի հոսանքի նիշերը թույլ են տալիս կառուցել դրենաժների հատակի նիշից 1,3 մ բարձրությամբ պատվար:

Ենթահունային դրենաժի ծախսի հաշվարկման ելակետային տվյալները այսպիսին են՝ $H_0 = 1,1 \text{ մ}$; $T = 1,2 \text{ մ}$; $d = 0,3 \text{ մ}$; $L = 60 \text{ մ}$; $K = 20 \text{ մ/օր}$:

Համաձայն (3) բանաձևի՝ $Q_0 = 10,7 \text{ մ}^3/\text{օր} = 0,124 \text{ լ/վրկ}$, իսկ սպասվելիք ընդհանուր ծախսը կլինի՝ $Q = 0,124 \cdot 60 \text{ լ/վրկ} = 7,4 \text{ լ/վրկ}$:

Այսպիսով, նշված տիպի հորիզոնական դրենաժների կառուցման դեպքում, Սպիտակացուր գետակի միջին հոսանքի տեղամասում, սոորերկրյա ջրերից՝ ջրառը ջրամատակարարման համար կկազմի՝ 20,1 լ/վրկ, որը միանգամայն պիտանի է խնելու համար:

Եզրակացություն: Սոորերկրյա ջրերի ջրառման ապահովման և հիմնավորված ու ճիշտ կազմակերպման համար առաջարկվում է.

• դրենաժների կառուցման համար օգտագործել պոլիմերային խողովակներ՝ առափնյա դրենաժի համար 200 մմ, իսկ ենթահունայինի համար՝ 300 մմ տրամագծի;

• խողովակների վրա ջրընդունիչ անցքերն անել կլոր (10 մմ տրամագծով) նրանց պարագծի 3/4 մասի վրա ամքող երկարությամբ ու շախմատաձև դասավորությամբ: Ընդ որում անցքերի առանցքների միջև հեռավորությունն ըստ պարագծի անել 5 սմ և 10 սմ՝ ըստ երկարության;

• խողովակաշարի հոծ մասն անել ներկում (ջրամերժի վրա), իսկ մնացած մասը պարուրել եռաշերտ տարահատիկ նյութերից հակադարձ ֆիլտրով, ըստ որում առաջին շերտը՝ մասն զլաքարախճային (20–40 մմ), երկրորդը՝ խոշոր կոպճային (10–20 մմ), երրորդը՝ խոշոր և շատ խոշոր հատիկավոր ավազային (0,5–2,0 մմ), յուրաքանչյուրը 10 սմ հաստությամբ:

• դրենաժային ուղեգծի յուրաքանչյուր թեքման հանգույցում կառուցել դիտահոր, որը կծառայի դրենաժի աշխատանքին հետևելու, անհրաժեշտ մաքրման և վերանորոգման աշխատանքներ կատարելու, ինչպես նաև դրենաժային ջրերում գրունտների փոքր մասնիկների նատեցման համար;

• գետակի յուրաքանչյուր վարարումից հետո ենթահունային դրենաժի տեղամասից հանել գրունտի վերևի տղմանատած շերտը՝ 0,3–0,5 մ հաստությամբ և փոխարինել նորով:

Ընդհանրացներով վերը շարադրված՝ կարելի է ասել, որ ջրաերկրաբանական հաշվարկներին համապատասխան Սպիտակացուր գետակի միջին հոսանքի տեղամասում առաջարկված դրենաժային համակարգերի կիրառման և կառուցման նորմերի պահպանման դեպքում, Դիլիջան քաղաքի արևելյան հատվածի բնակչության (շուրջ 5 հազ. բնակիչ) մաքուր ջրի մատակարարման հարցը կարելի է հաճարել լուծված տարվա բոլոր եղանակներին: Իսկ հետազոտման քաղաքին լրացնից ջրաքանակի պահանջարկ առաջանալու դեպքում նմանատիպ հետազոտություններ կարելի է կատարել քաղաքին մերձակա այլ գետակների հովտամասերում՝ սոորերկրյա ջրերի ջրհաննան առումով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Справочное руководство гидрогеолога. Т. 1. М., 1979, 512 с.
2. Геология Армянской ССР. Т. VIII. Гидрогеология (под ред. Аветисяна В.А). Ер.: Изд. АН Арм. ССР, 1974, 390 с.

Ж. А. АЧОЯН

ВОЗМОЖНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД ПОЙМЕННОЙ ЧАСТИ РУЧЬЯ СПИТАКАДЖУР ДЛЯ ПИТЬЕВОГО ВОДОСНАБЖЕНИЯ ГОРОДА ДИЛИЖАНА

Резюме

В настоящее время водоснабжение населения восточной части г. Дилижана осуществляется водами Спитакаджурского ручья (Фролова балка), однако в период паводков они становятся очень мутными и непригодными для питья.

В статье обосновывается благоприятность гидрогеологических условий некоторых отрезков пойменной части среднего течения ручья Спитакаджур для устройства горизонтального дренажа прибрежного и подруслового типа с целью водозабора подземных вод для снабжения питьевой водой населения указанной части города согласно соответствующим нормам. При этом количество дренажных вод, подсчитанное соответствующими гидрогеологическими расчетами, составляет порядка 20 л/с, что вполне удовлетворяет хозяйственно-питевым нуждам населения восточной части г. Дилижана (порядка 5 тыс. человек).

Zh. A. ACHOYAN

**POSSIBILITY OF USING UNDERGROUND WATERS OF VALLEY
SECTIONS OF THE SPITAKAJUR STREAM TO SUPPLY
DILIJAN CITY WITH POTABLE WATER**

Summary

At present, water supply of the eastern section of Dilijan City is implemented from the Spitakajur Stream waters, but they become turbid and unusable in the high water period.

Water-geological conditions of the valley sections of the Spitakajur Stream middle flow are favorable for constructing waterside and infrabed water drainages, for intake of underground waters through them and for supplying with potable water the mentioned part of the City. Moreover, the volume of drainage waters, determined by the corresponding water-geological calculations, makes 20 L/s, which will completely satisfy drinking-household needs of the eastern section of Dilijan City (over 5000 capita).